# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
## 23.04.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/2 պայմանագրի

ք. Երևան «23» «06» 2022թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Շինսերտիֆիկատ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.05.2022թ. N 757-Ն որոշումը և **ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների (Փուլ-1 և Փուլ-2) նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության** մատուցման համար Կողմերի միջև 23.04.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետում <<5 760 000 (հինգ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար)>> թիվը և բառերը փոխարինել <<16 018 300 (տասնվեց միլիոն տասնութ հազար երեք հարյուր)>> թվով և բառով:

1.1.2 Հաստատել 2022 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը նոր խմբագրությամբ համաձայն Համաձայնագրի N1 հավելվածի:

1.1.3 Պայմանագրի N 4 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի N 2 հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի N1 հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից, N2 հավելվածը բաղկացած է 4 (չորս) էջից, համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011036994<br>ՀՎՀՀ 02565827<br>Գլխավոր քարտուղար՝ | «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ<br>ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա<br>«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1150009355815863<br>ՀՎՀՀ 01528652<br>Տնօրեն՝ |
| _______________ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | _______________ Ա. Վարդանյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 1
23.04.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԽԾՁԲ-21/2 պայմանագրի
«23» «06» 2022թ. կնքված N2 համաձայնագրի

<<Հավելված N 3
23.04.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԽԾՁԲ-21/2 պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | 2021թ. վճարված գումար | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71351540/1 | ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների (Փուլ-1 և Փուլ-2) նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն, այդ թվում՝ | 4 910 800 | - | - | - | 849 200 | 849 200 | 7 876 400 | 10 030 400 | 10 030 400 | 10 030 400 | 11 107 500 | 11 107 500 | 11 107 500 | **11 107 500** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **4 910 800** | - | - | - | **849 200** | **849 200** | **7 876 400** | **10 030 400** | **10 030 400** | **10 030 400** | **11 107 500** | **11 107 500** | **11 107 500** | **11 107 500** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011036994
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ՝**

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652
Տնօրեն՝

_______________ Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 2*
*23.04.2021թ. կնքված*
*N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/2 պայմանագրի*
*«23» «06» 2022թ. կնքված N2 համաձայնագրի*
*<<Հավելված N 4*
*23.04.2021թ. կնքված*
*N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/2 պայմանագրի*

**Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ**

**ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների «ՓՈԻԼ-1»**

| NN | Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր | Շահագործման երաշխիքային ժամկետ /տարի/ |
|---|---|---|
| 1 | Բետոնե եզրաքարեր 150x300մմ | 5 |
| 2 | "Բ" տիպի մանրահատիկ տաք ասֆալտաբետոն | 5 |

*Սարքավորումներ*

| N | Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ | Չ.մ | Քանակ | Նվազագույն երաշխիքային ժամկետ | Կապալառուի կողմից առաջարկվող սարքավորում | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Արտադրող ընկերության անվանումը | Մոդել |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 7 | 8 |
| | Լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան ԼՏԵ | | | | | |
| 1 | Լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան ԼՏԵ КТП-250 10(6) 0.4кв | լրա-կազմ | 1 | 1 տարի | ООО <ПКФ> главэнерго Тула | КТП250 10 (6) 0.4КВ |

*Սարքավորումը ենթակա չէ փոփոխության շին-մոնտաժային աշխատանքների ընթացքում/, բացառությամբ այն դեպքերի, երբ արտադրող ընկերությունը այլևս չի գործում կամ ներկայացված մոդելը դուրս է եկել արտադրությունից՝ երկու դեպքում էլ հիմնավորող փաստաթղթերի ներկայացման պարագայում, ինչպես նաև, եթե լոգիստիկ խնդիրներով պայմանավորված՝ անհնար է դարձել նշված մոդելի մատակարարումը ՀՀ և առկա է դրա մասին տվյալ ապրանքանիշի մատակարար ընկերության գրավոր հավաստումը/:

**ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների «ՓՈԻԼ-2»**

*Աղյուսակ N 1*

| Հ/Հ | Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր | Նախագծողի կողմից սահմանված նվազագույն շահագործման երաշխիքային ժամկետ /տարի/ |
|---|---|---|
| **1** | **2** | **3** |
| 1 | Շենքի կրող կոնստրուկցիաների շահագործման հաշվարկային ժամկետ | 50 |
| | **Պատեր և միջնորմներ** | |
| 1 | Արտաքին պատերի շարում 20 սմ հաստությամբ սնամեջ բետոնե բլոկներով, ամրանավորումով | 30 |
| 2 | Պատերի ջերմամեկուսիչ էքստրուդացված փրփապոլիստիրոլե սալեր 100 մմ | 25 |

| | | |
|---|---|---|
| | հաստությամբ | |
| 3 | Միջնորմների շարում 100մմ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով) | 30 |
| | **Դռներ, պատուհաններ** | |
| 1 | Մետաղական դռներ ԴՄ19-9 3հատ (խողովակ 60x40x2մմ, անկյունակ 50x50x4մմ, պողպատե թերթ δ=3մմ, պենոպլաստից միջուկ, ներսից երեսապատված ՕՍՊ սալով, ծխնի ) | 20 |
| 2 | Մուտքի մետաղական դուռ | 20 |
| 3 | Մետաղապլաստե, ներքին, ապակեպատ, դռներ ԴՊ24-9, ԴԱ 24-12, ԴԱ 24-9 | 5 |
| 4 | Մետաղապլաստե, ներքին խուլ դռներ Դ 24-7 | 5 |
| 5 | Ձեղնահարկի, ճաղաշարով դուռ Դ Ձ 18-7 | 20 |
| 6 | Մետաղապլաստե, ապակեփաթեթով պատուհաններ | 5 |
| 7 | Ծպեղնահարկի ճաղաշարով պատուհան ՊՃ 6-7 | 20 |
| | **Հատակներ** | |
| 1 | Խեցեսալե հատակներ | 20 |
| 2 | Խեցեսալե շրիշակներ | 20 |
| 3 | Լամինացված մանրատախտակից հատակներ | 20 |
| 4 | Պլաստիկ շրիշակներ | 20 |
| | **Հարդարման աշխատանքներ** | |
| 1 | Պատերի և շեպերի լատեքսային ներկ | 10 |
| 2 | Պատերի ջրաէմուլսիոն ներկ | 10 |
| 3 | Առաստաղների լատեքսային ներկ | 10 |
| 4 | Առաստաղների ջրաէմուլսիոն ներկ | 10 |
| 5 | Պատերի հաղճասալ | 20 |
| 6 | Կախովի առաստաղներ պլաստիկ սալերով | 10 |
| | Սառը և տաք ջրի մատակարարում | |
| | **Սառը ջուր** | |
| 1 | Լվացարանի ծորակ-խառնիչ | 2 |
| 2 | Խոհանոցակոնքի ծորակ-խառնիչ | 2 |
| 3 | Ցնցուղի ծորակ-խառնիչ | 2 |
| 4 | Պոլիպրոպիլենային խողովակներ տարբեր տրամագծի | 20 |
| 5 | Փականներ տարբեր | 2 |
| | **Կենցաղային կոյուղի** | |
| 1 | Լվացարանակոնքեր սիֆոնով | 5 |
| 2 | Խոհանոցակոնք | 5 |
| 3 | Զուգարանակոնք | 5 |
| 4 | Լոգախցիկ | 5 |
| 5 | Պոլիպրոպիլենային խողովակներ տարբեր տրամագծի | 20 |
| | **Ջեռուցում** | |
| 1 | Փականներ տարբեր | 2 |
| 2 | Պոլիպրոպիլենային խողովակներ տարբեր տրամագծի | 20 |
| 3 | Այումինից ջեռուցման սարքեր h=500մմ | 10 |
| | **Էլեկտրալուսավորում** | |
| 1 | Առաստաղի լուսատու 12վտ LED | 1 |
| 2 | Պատի լուսատու 12վտ LED IP65 | 1 |
| 3 | Կոթառ կախովի | 1 |
| 4 | Առաստաղի լուսատու ներսարքվող 9վտ LED IP55 | 1 |
| 5 | Պատի լուսատու 12վտ LED IP65 (աստիճանավանդակ) | 1 |

| | | |
|---|---|---|
| 6 | Պատի լուսատու 9վտ LED IP20 (սանհանգույց ) | 1 |
| 7 | Անջատիչ 250Վ 6Ա, մեկստեղանի | 1 |
| 8 | Նույնը, երկստեղանի 250վ. 6Ա | 1 |
| 9 | Անջատիչ ռեվերսիվ, երկու ուղղության 250վ. 6Ա | 1 |
| 10 | Վարդակ մեկտեղանոց 16Ա, հողանցվող կոնտակտով | 1 |
| 11 | Վարդակ երկտեղանոց 16Ա, հողանցվող կոնտակտով | 1 |
| 12 | Բաշխիչ վահանի պլաստիկ արկղ 6մոդուլի | 2 |
| 13 | Բաշխիչ վահանի պլաստիկ արկղ 12 մոդուլի | 2 |
| 14 | Բաշխիչ վահանի պլաստիկ արկղ 24 մոդուլի | 2 |
| 15 | Անջատիչ-բաժանիչ միաբևեռ 63Ա | 1 |
| 16 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ 16Ա | 1 |
| 17 | Անջատիչ գծային միաբևեռ դիֆերենցիալ16A 30Ma | 1 |
| 18 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ 25Ա | 1 |
| 19 | Անջատիչ գծային միաբևեռ դիֆերենցիալ 25A 30Ma | 1 |
| 20 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ 32Ա | 1 |
| 21 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ 40Ա | 1 |
| 22 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ 50Ա | 1 |
| | **Անասնագոմի համաշինարարական աշխատանքներ** | |
| 1 | Պատերի շարում կանոնավոր ձևի տուֆ քարերով 40սմ հաստ. | 30 |
| 2 | Արտաքին մետաղական դռան տեղադրում ԴՄ 22-13 | 20 |
| 3 | Մետաղապլաստե պատուհանների տեղադրում | 5 |
| | **Անասնագոմի Էլեկտրալուսավորում** | |
| 1 | Առաստաղի լուսատու 20վտ LED | 1 |
| 2 | Պատի լուսատու 12վտ LED IP65 | 1 |
| 3 | Անջատիչ երեք ստեղանի 250վ. 6Ա | 1 |
| 4 | Վարդակ մեկտեղանոց 16Ա, հողանցվող կոնտակտով | 1 |
| 5 | Բաշխիչ վահանի պլաստիկ արկղ 6մոդուլի | 2 |
| 6 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ 32Ա | 1 |
| 7 | Անջատիչ գծային միաբևեռ դիֆերենցիալ 25A 30Ma | 1 |

*Այլուսակ N 2*

| Հ/Հ | Կապալառուի կողմից առաջարկվող սարքավորում | Չափի միավոր | Քանակ | Կապալառուի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ | Արտադրող ընկերության անվանում | Մոդել /առկայության պարագայում/ | Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | **Ջեռուցում** | | | | | | |
| 1 | Էլեկտրաջրատաքացուցիչ կաթսա պատին ամրացվող | կ-տ | 13 | 2 | EVAN | EVAN NEXT | EVAN NEXT Q=7,5 կվտ |
| | **Սառը և տաք ջրի մատակարարում** | | | | | | |
| | **Տաք ջուր** | | | | | | |
| 2 | Էլեկտրական ջրատաքացուցիչ | կ-տ | 13 | 2 | Ariston | Ariston A100 | Ariston 100լ |

** Սարքավորումները ենթակա չեն փոփոխության շին-մոնտաժային աշխատանքների ընթացքում:*

ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների փուլ 2 մաս 2-ով նախատեսված արտաքին ինժեներական ենթակառուցվածքների, տարածքի հենապատերի, տների պարիսպների ու ցանկապատերի կառուցման աշխատանքներ

Աղյուսակ N 3

| N | Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ | Չ.մ | Քանակ | Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ | Կապալառուի կողմից առաջարկվող սարքավորում | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Կապալառուի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ | Արտադրող ընկերության անվանումը | Մոդել |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **Մաքրման կայանի ե/բետոնե հոր** | | | | | | | |
| 1 | Մաքրման կայան Топас АЭРО-32 կամ համարժեք | կ/տ | 1 | 1 տարի | ▪ Օդամղիչ – 1 տարի<br>▪ Էլեկտրական սարքեր – 1 տարի<br>▪ Կայանի կոնստրուկցիա – 15 տարի<br>▪ Երաշխիքային սպասարկում – 6 ամիս | «Խիմմաստեր» ՍՊԸ | Կայան FBR - 30 |

*Սարքավորումը ենթակա չէ փոփոխության շին-մոնտաժային աշխատանքների ընթացքում/, բացառությամբ այն դեպքերի, երբ արտադրող ընկերությունը այլևս չի գործում կամ ներկայացված մոդելը դուրս է եկել արտադրությունից՝ երկու դեպքում էլ հիմնավորող փաստաթղթերի ներկայացման պարագայում, ինչպես նաև, եթե լոգիստիկ խնդիրներով պայմանավորված՝ անհնար է դարձել նշված մոդելի մատակարարումը ՀՀ և առկա է դրա մասին տվյալ ապրանքանիշի մատակարար ընկերության գրավոր հավաստումը/:>>:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչության
Հ/Հ 900011036994
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ՝**

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652
Տնօրեն՝

_______________ Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

№ 4028-02

«22» 06 2022

**ԵՐԱՇԽԻՔ**
**(պայմանագրի ապահովում)**

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի միջև կնքվելիք N **«ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/2»** պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,025,830 (մեկ միլիոն քսանհինգ հազար ութ հարյուր երեսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N **«ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/2»** պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.06.2024թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **«ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-21/2»** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագած վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ բիզնեսի կառավարման
Դեպարտամենտի տնօրեն Հ. Նավասարդյան

Ֆինանսական տնօրենի
տեղակալ՝ Ն. Սարգսյան